ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 07-08-Ի ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան «11» հոկտեմբերի 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 04-ի թիվ 1-Լ որոշման հիման վրա՝ 2021 թվականի հոկտեմբերի 07-08-ին տեղի ունեցավ Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը.

2. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը.

3. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին կիսամյակի (ամփոփ) գործունեության կատարողականի գնահատումը.

4. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում.

5. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի (ք. Վանաձոր, Նժդեհի 14, 78,45քմ տարածքի) վերանորոգման նպատակով բյուջետային վերաբաշխմանը (էներգետիկ ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածի խնայված

միջոցներից դեպի շենքերի և շինությունների նորոգում և պահպանում հոդված՝ 2.946.000 ՀՀ դրամ գումարի չափով).

6. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի գնումների պլանում ներառված վառելիքի (բենզին ռեգուլյար) գնման առարկայի քանակի և միավորի գնի փոփոխությանը (3.867.500 ՀՀ դրամ գումարի չափով)՝ հաշվի առնելով վերջին մի քանի ամիսների ընթացքում շուկայում բենզինի գնի թանկացումները.

7. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում նախատեսվող փոփոխություններին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Կառավարման խորհրդի նախագահ՝

Ա. Փիլոյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ա. Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ս. Գրիգորյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Ա. Ղուլարյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ
Ս. Թովմասյան	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Մ. Սանդոյան	ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ ներկայացուցիչ
Ա. Կարապետյան	«Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Ն. Տերյան

Ա. Դանիելյան

Մ. Հովհաննիսյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի քաղաքաշինության ամբիոնի պրոֆեսոր, ճարտարապետության թեկնածու

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքները՝ 8 կողմ, 0 դեմ:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը.

2. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 2-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը.

3. Հաստատել ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին կիսամյակի (ամփոփ) գործունեության կատարողականի գնահատումը.

4. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի (ք. Վանաձոր, Նժդեհի 14, 78,45քմ տարածքի) վերանորոգման նպատակով բյուջետային վերաբաշխմանը (էներգետիկ ծառայություններ տնտեսագիտական դասակարգման հոդվածի խնայված միջոցներից դեպի շենքերի և շինությունների նորոգում և պահպանում հոդված՝ 2.946.000 ՀՀ դրամ գումարի չափով).

5. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի գնումների պլանում ներառված վառելիքի (բենզին ռեգուլյար) գնման առարկայի քանակի և միավորի գնի փոփոխությանը (3.867.500 ՀՀ դրամ գումարի չափով)՝ հաշվի առնելով վերջին մի քանի ամիսների ընթացքում շուկայում բենզինի գնի թանկացումները.

6. Հավանություն տալ ՔՏՀԱ տեսչական մարմնի 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրում նախատեսվող փոփոխություններին:

ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվությունն ընդունվել է ի գիտություն:

Կառավարման խորհրդի նախագահի
պարտականությունները ժամանակավոր կատարող՝ **Արմեն Փամբուխչյան**

Կառավարման խորհրդի քարտուղարի
պարտականությունները ժամանակավոր կատարող՝ **Ա. Հայրապետյան**